Ինկորպորացիա առ 21.04.2026 N 02-Լ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոս 2024 թվական **N 05-Լ**

ՈՐՈՇՈՒՄ

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-ին հոդվածի 4-րդ մասով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)

ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության և գնահատման մեթոդաբանությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

ք. Երևան

Հավելված
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
2024 թվականի օգոստոսի 12-ի N 05-Լ որոշման

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԲԱԺԻՆ 1. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ 8

ԳԼՈՒԽ 1. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 8

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....14

ԳԼՈՒԽ 3. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....16

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....20

ԲԱԺԻՆ 2. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ 21

ԳԼՈՒԽ 1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԴՐՈՒՄ.....21

ԳԼՈՒԽ 2. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ.....22

ԳԼՈՒԽ 3. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՈՒՄ.....23

ԳԼՈՒԽ 4. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....24

ԳԼՈՒԽ 5. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԻ ԿԱԶՄՈՒՄ.....26

ԲԱԺԻՆ 3. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....27

ԳԼՈՒԽ 1. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....27

ԳԼՈՒԽ 2. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....29

ԳԼՈՒԽ 3. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ԴՐՍԵՎՈՐԱԾ ՎԱՐՔԱԳԾԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ) ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....37

ԳԼՈՒԽ 4. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԿԱՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....**44**

ԳԼՈՒԽ 5. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՀԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....**47**

ԲԱԺԻՆ 4. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՓՈՒԼ.....50

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի մարտի 25-ին ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծերի փաթեթի շրջանակում Ազգային ժողովի կողմից ընդունվեց ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը: Օրենքի ընդունման արդյունքում ներդրվեց Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգ:

Նշված խումբ պաշտոնների համար բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պարտադիր պահանջ սահմանելուց և գործնականում դրա կիրառումից հետո հակակոռուպցիոն քաղաքականությունն ուղղված էր ուսումնասիրություն անցնող պաշտոնների շրջանակի ընդլայնմանը՝ թիրախավորելով հակակոռուպցիոն համակարգում ընդգրկված մարմիններում պաշտոնի հավակնող անձանց:

Այս առումով, 2021 թվականի փետրվարի 3-ին Ազգային ժողովի կողմից ընդունված ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքով ներդրվել է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող առանձին դատավորների ինստիտուտը՝ միաժամանակ նախատեսելով առանձին հաստիքներ սահմանել նաև Վերաքննիչ քրեական դատարանում: Նշված օրենքի անցումային դրույթներով սահմանվել էր, որ վերոնշյալ դատավորների թեկնածուները/հավակնորդները պաշտոնի նշանակվելու կամ թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար պետք է օրենքով սահմանված կարգով անցնեն բարեվարքության ուսումնասիրություն:

Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

օրենքները, որոնցով սահմանվել են Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոններ և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոններ զբաղեցնելուն հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրության կարգավորումները:

Բացի այդ, 2021 թվականի ապրիլի 14-ին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական, «Դատախազության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների, ինչպես նաև 2022 թվականի դեկտեմբերի 23-ին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի ընդունմամբ բարեվարքության ամրապնդման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պահանջ սահմանվեց ոչ միայն դատավորների թեկնածուների հավակնորդների, այլև վերաքննիչ դատարաններում և վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց, ինչպես նաև դատախազների թեկնածուների և դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող դատախազների համար:

Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության գործող կառուցակարգերի կատարելագործման և զարգացման ապահովման անհրաժեշտությամբ 2024 թվականի ապրիլի 11-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվեցին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների

նախագծերը, որոնց ընդունմամբ ոչ միայն ընդլայնվեց բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը՝ ի դեմս Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոնների, այլև ներդրվեց նոր՝ բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգը, որը միտված է ողջ դատական համակարգում, դատախազությունում և քննչական մարմիններում բարեվարքության մակարդակի ամրապնդմանը և զարգացմանը:

Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրությունն իրականացվում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքով սահմանված կարգով՝ առաջին անգամ պաշտոնի նշանակվելուց հետո՝ վեցերորդ տարում, բացառությամբ Գլխավոր դատախազի և նրա տեղակալների, Քննչական կոմիտեի նախագահի և նրա տեղակալների, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների: Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրությունը և գնահատումը իրականացվում է սույն մեթոդաբանության հիման վրա՝ հաշվի առնելով բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության գործընթացի առանձնահատկությունները, մասնավորապես՝ ուսումնասիրության վերաբերելի ժամանակահատվածը (բացառությամբ գույքային դրության վերաբերյալ տեղեկությունների), ինչպես նաև զբաղեցրած պաշտոնից բխող առանձնահատկությունները:

Բացի այդ, Ազգային ժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 2-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են Ոստիկանության իրավասու ստորաբաժանումում, այն է՝ Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում առաջին անգամ ոստիկանության ծառայության պաշտոնի նշանակվելուց առաջ թեկնածուների՝ պարտադիր բարեվարքության ուսումնասիրություն անցնելու կարգավորումները:

Օրենսդրական փոփոխությունների իրականացումը շարունակվել է նաև 2026 թվականին: Մասնավորապես՝ 2026 թվականի մարտի 04-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Ազգային ժողովի կանոնակարգ», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքներում և հարակից օրենքներում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը: Նախագծերով նախատեսվեց որոշակի պաշտոններում նշանակումներ կատարելուց հետո տվյալ անձանց բարեվարքության եզրակացությունների եզրափակիչ մասի հրապարակման պահանջ՝ անկախ դրա բացասական կամ դրական լինելու հանգամանքից: Այս փոփոխության իրականացման համատեքստում վերանայվեց նաև բարեվարքության ուսումնասիրության իրականացման գործընթացը՝ դրան թեկնածուների (անձանց) մասնակցության առավել կանոնակարգված ընթացակարգեր սահմանելու եղանակով:

(Ներած. լրաց. 21.04.2026 N 02-L)

ԲԱԺԻՆ 1. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Թեկնածուի կողմից լրացված հարցաթերթիկի հիման վրա անհրաժեշտ տվյալների վերհանում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից անհրաժեշտ տեղեկությունների ստացման նպատակով հարցումների ուղարկում.

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26.1-ին հոդվածով նախատեսված՝ անձի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության գործընթացն իրականացնելու նպատակով լրացված բարեվարքության հարցաթերթիկի համապատասխան բաժիններից դուրս են բերվում անձանց նույնականացնելու նպատակով այնպիսի տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի հարցումներ կատարել համապատասխան մարմիններ՝ անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով:

2. Հանձնաժողովի կողմից ներքոնշված պետական մարմիններից կատարվում են հարցումներ, որոնցում պարտադիր պահանջվում է նշված տեղեկատվությունը.

ա) Պետական եկամուտների կոմիտե (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ).

- 2013 թ. հունվարի 1-ից սկսած անձի՝ ստացված եկամուտների (ըստ տարիների, ըստ եկամտի տեսակի և աղբյուրի) մասին տեղեկատվություն:

բ) ՀՀ կադաստրի կոմիտե (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ).

- 2011 թ. հունվարի 1-ից սկսած անձի անվամբ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման, անձի կողմից օտարված կամ ձեռք բերված անշարժ գույքի մասին տեղեկատվություն (այդ թվում՝ սեփականության իրավունքի գրանցման կամ դադարման հիմքերը).

գ) ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ).

- անձի մասնակցությամբ գրանցված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ մասին տեղեկատվություն (այդ թվում՝ լուծարված կամ գործունեությունը կասեցված կամ ժամանակավոր դադարեցված լինելու մասին).

- անձի կարգավիճակը գրանցված ընկերությունում և առկա բաժնեմասնակցության չափը.

դ) Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն (հարցումը կատարվում է միայն Թեկնածուի վերաբերյալ).

- անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ամուսին, անձի և ամուսնու ծնող, չափահաս կամ անչափահաս զավակ, քույր, եղբայր) վերաբերյալ տեղեկություններ.

ե) Գլխավոր դատախազություն (հարցումը կատարվում է միայն Թեկնածուի վերաբերյալ).

- անձի՝ քրեական պատասխանատվության ենթարկված լինելու, վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացված լինելու վերաբերյալ տեղեկատվություն (մեղադրյալի (այդ թվում՝ վկա-կասկածյալի) կարգավիճակով).

զ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ).

- անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացված լինելու վերաբերյալ տեղեկատվություն.

- անձի՝ որևէ կերպ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ երբևէ առնչություն ունենալու վերաբերյալ տեղեկատվություն.

- անձի կողմից գույքի փաստացի տիրապետման, անձի հետ համատեղ բնակության, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքն անձի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելու կամ անձի կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալու կամ այդ գույքը տնօրինելու վերաբերյալ տեղեկատվություն.

է) Հակակոռուպցիոն կոմիտե (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ)

- անձի կողմից գույքի փաստացի տիրապետման, անձի հետ համատեղ բնակության, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքն անձի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելու կամ անձի կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալու կամ այդ գույքը տնօրինելու վերաբերյալ տեղեկատվություն.

ը) ՀՀ ներքին գործերի նախարարություն

- դատվածության առկայության կամ բացակայության (այդ թվում՝ վերացված կամ մարված) վերաբերյալ տեղեկատվություն.

- անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացված լինելու վերաբերյալ տեղեկատվություն.

- անձի՝ որևէ կերպ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ երբևէ առնչություն ունենալու վերաբերյալ տեղեկատվություն (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ).

- վերջին 5 տարվա ընթացքում վարչական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ տեղեկատվություն (բացառությամբ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերով).

- անձի փաստացի բնակության վայրի վերաբերյալ տեղեկատվություն (հնարավորության դեպքում).

- անձի հետ համատեղ բնակվող անձանց վերաբերյալ տեղեկատվություն (հնարավորության դեպքում).

- ըստ վերաբերելի ժամանակահատվածի անձի կողմից ՀՀ սահմանային հատումների քանակի, ուղղության (երկիրը) և տևողության վերաբերյալ տեղեկատվություն.

- անձի տվյալները ոստիկանական ամփոփագրերում երբևէ ներառված կամ շրջանառված լինելու վերաբերյալ տեղեկատվության, իսկ առկայության դեպքում նաև ամփոփագրերի պատճենները (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ).

թ) ՀՀ ՆԳՆ Ոստիկանության ճանապարհային ոստիկանություն.

- Ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վերջին մեկ տարվա ընթացքում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին տեղեկատվություն՝ նշելով նաև խախտման բնույթը:

- 2011 թ. հունվարի 1-ից սկսած անձի կողմից տրանսպորտային միջոցի ձեռքբերման կամ օտարման, ինչպես նաև հարցման օրվա դրությամբ անձի անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվություն (այդ թվում՝ օտարման կամ ձեռքբերման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները)՝ (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ):

ժ) Երևանի քաղաքապետարան (հարցումը կատարվում է միայն Թեկնածուի վերաբերյալ).

- ավտոկայանատեղիի տեղական տուրքի վճարման կանոնների խախտման համար վերջին մեկ տարվա ընթացքում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին տեղեկատվություն.

ժա) ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների համար)

- անձին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում՝ ձեռքբերման/օտարման ամսաթիվ, գործարքի կողմ, արժեթղթերի ձեռքբերման արժեք, բաժնեմասնակցության տոկոսը).

ժբ) Բարձրագույն որակավորման կոմիտե (հարցումը կատարվում է միայն Թեկնածուի վերաբերյալ).

- արդյո՞ք անձը հանդիսանում է գիտությունների թեկնածու: Եթե այո, ապա որն է եղել թեկնածուական ատենախոսության թեման.

- որ թվականին է տեղի ունեցել թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը.

- արդյո՞ք թեկնածուական ատենախոսության մշակման և պաշտպանության ժամանակ առկա են եղել և դրսևորվել են ակադեմիական ազնվության և բարեվարքության հետ կապված խնդիրներ.

ժգ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապահովագրական ընկերություններ[1] (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ).

- անձի ապահովադիր կամ պայմանագրի շահառու հանդիսանալու պարագայում առկա ապահովագրական պայմանագրի մասին տեղեկատվություն (այդ թվում՝ պայմանագրի առարկան, ապահովագրված օբյեկտի արժեքը, պայմանագրի գինը, պայմանագրի շահառուի տվյալները).

ժդ) ՀՀ կենտրոնական բանկ (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ).

- ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համատեղ որոշմանը համապատասխան բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները

ժե) ԱՔՌԱ վարկային բյուրո (հարցումը կատարվում է թե՛ Թեկնածուի, թե՛ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ).

---

[1] Հարցումն իրականացվում է ՀՀ տարածքում գործող բոլոր ապահովագրական ընկերություններին բացառությամբ «Հայաստանի արտահանման ապահովագրական» ընկերության:

- ստացված վարկերի և դրանց մնացորդների վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն ձեռքբերված համաձայնությամբ.

ժզ) Դատական դեպարտամենտ.

- անձի՝ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքացիական գործի շրջանակներում որպես հայցվոր կամ պատասխանող հանդես եկած լինելու վերաբերյալ տեղեկատվություն (ավարտված գործով ուժի մեջ մտած դատական ակտի համարը, տարեթիվը, ակտը կայացրած դատարանի անվանումը),

- անձի դատվածության առկայության, ինչպես նաև ցանկացած հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ տեղեկատվություն (դատական գործի համարը, տարեթիվը, ակտը կայացրած դատարանի անվանումը):

ժէ) Անձի կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ տեղեկատվություն.

- հարցումն ուղարկվում է բոլոր այն մարմիններին, որտեղ անձը զբաղեցրել է պաշտոն՝ վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ժամանակահատվածի համար: Ընդ որում, տվյալ հարցման ներքո ենթակա են ներկայացման նաև օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված կարգապահական տույժերը: Հարցումներն ուղարկվում են՝ հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի և «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի[2] իրավակարգավորումները:

ժը) Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն (հարցումը կատարվում է միայն Թեկնածուի վերաբերյալ).

- անձի՝ քրեական ենթամշակույթ կրող անձի հետ ազգակցական կամ ընկերական կապի առկայության վերաբերյալ,

- անձի՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ անհատական հանդիպման, հեռախոսային կամ այլ հեռահար հաղորդակցություն ունենալու վերաբերյալ,

---

[2] «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիա, https://rm.coe.int/convention-108-convention-for-the-protection-of-individuals-with-regar/16808b36f1%20https://www.coe.int/en/web/data-protection

- անձի՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ անձնական, աշխատանքային կամ այլ կապ ունենալու վերաբերյալ:

ժթ) Խաղային գործունեության կարգավորման օպերատոր (հարցումը կատարվում է միայն Թեկնածուի վերաբերյալ).

- անձի՝ խաղային հարթակի օգտատեր հանդիսանալու, կատարված մուտքերի/ելքերի, շահումների և պարտությունների, ինչպես նաև խաղադրույքների վերաբերյալ:

(2-րդ կետը լրաց. 21.04.2026 N 02-L)

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Ուսումնասիրության շրջանակներում անձի աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի առնչությամբ տեղեկատվություն ստանալու նպատակով Հանձնաժողովն իրականացնում է ոչ միայն գրավոր հարցումներ, այլև, անհրաժեշտության դեպքում, կարող է իրականացնել նաև հեռախոսային հարցազրույցներ՝ Հանձնաժողովի կողմից ընտրված՝ անձի աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի վերաբերյալ տեղեկությունների տիրապետող անձանց հետ:

(1-ին կետը լրաց. 21.04.2026 N 02-L)

2. Վերը նշված անձանց ընտրությունը կամայական չէ. ընտրությունը կատարվում է այնպես, որ կախված անձի աշխատանքային գործունեության բնույթից՝ հնարավոր լինի ապահովել վերջինիս վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ստացումը, դրանք Հանձնաժողովին հասանելի դարձած տեղեկությունների հետ համադրումը, Թեկնածուի մասնագիտական գործունեության շրջանակներում դրսևորած վարքագծի, քաղաքական չեզոքություն պահանջող պաշտոնների դեպքում՝ նաև քաղաքական չեզոքության և զսպվածության վերաբերյալ հնարավոր տեղեկությունների պարզումը: Որպես օրինակ՝ բարեվարքության ուսումնասիրություն անցնող գործող դատավորների, դատախազների դեպքում datalex.am դատական տեղեկատվական հարթակի օգնությամբ ընտրվում են պաշտոնատար անձի դատական գործերում առավել հաճախակի կամ հանրային հնչեղություն ունեցած գործերով մասնակցություն ունեցած դատավարության հակառակ կողմում գտնվող

մասնակիցներ (դատավորի դեպքում՝ դատախազ, փաստաբան, դատախազի դեպքում՝ դատավոր, փաստաբան և այլն): Հարցազրույցների ընթացքում ձեռքբերված իրարամերժ տեղեկությունների պարագայում Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ սահմանված կարգով լրացուցիչ հարցազրույցներ կարող է անցկացնել այլ անձանց հետ (առավելագույնը 6 անձ): Ստացված տեղեկությունները համադրվում և ներառվում են բարեվարքության եզրակացության համապատասխան բաժնում և տեղեկությունների իրարամերժ լինելու մասին լրացուցիչ նշում է կատարվում:

(2-րդ կետը փոփ. 21.04.2026 N 02-L)

3. Հարցազրույցի նպատակն է Թեկնածուի վերաբերյալ այնպիսի տեղեկությունների ստացումը, որոնք կօգնեն Հանձնաժողովին պատկերացում կազմել վերջինիս՝ բարեվարքության ուսումնասիրության շրջանակներում ներառվող տեղեկությունների վերաբերյալ:

4. Հեռախոսային հարցազրույցի տիպային հարցերի ցանկը ենթակա է փոփոխման՝ կախված Թեկնածուի զբաղեցրած պաշտոնից, այն պաշտոնից, որին հավակնում է Թեկնածուն, ինչպես նաև կախված զրուցակցի և Թեկնածուի միջև առկա հարաբերությունների բնույթից:

5. Այն դեպքում, երբ հարցազրույցի սկզբում պարզվում է, որ հարցազրույցի ենթարկվող անձն ազգակցական, խնամիական, մտերիմ ընկերական կամ որևէ այլ մտերիմ կապի մեջ է բարեվարքության ուսումնասիրություն անցնող անձի հետ՝ հարցազրույցը դադարեցվում է՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայացված կարծիքը կարող է ընկալվել որպես ոչ օբյեկտիվ:

6. Հարցազրույցը զրուցակցին տեղեկացվելուց հետո ձայնագրվում է և պահվում դրա համար նախատեսված հատուկ պանակում: Եթե զրուցակիցն առարկում է հարցազրույցը ձայնագրելուն, ապա ձայնագրություն չի արվում, դրա փոխարեն իրականացվում են ձեռագիր նշումներ:

7. Հարցազրույցի ընթացքում ներկայացված տեղեկությունները բարեվարքության եզրակացության մեջ կարող են ներկայացվել և գնահատման առարկա դառնալ բացառապես այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրման արդյունքում:

(7-րդ կետը խմբ. 21.04.2026 N 02-L)

ԳԼՈՒԽ 3. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Թեկնածուի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրության նպատակն է ուսումնասիրել անձի վերաբերյալ մամուլում տեղ գտած հրապարակումները, մասնավորապես՝ նրա բարեվարքությանը վերաբերող հանրային ընկալումը բացահայտելու, ինչպես նաև հնարավոր տեղեկությունները կոնկրետ տվյալների ստուգման և վերլուծության ընթացքում օգտագործելու նպատակով:

2. Ուսումնասիրության նպատակն է բացահայտել ցանկացած լուր, տեղեկատվություն, որը կարող է նշում պարունակել անձի, ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամների՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, պաշտոնեական դիրքի չարաշահման, ապօրինի եկամուտների, շահերի բախման իրավիճակներում գործելու, դրսևորած վարքագծի և այլ էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին: Բացի այդ, հոդվածները կարող են պարունակել անձի և նրա ընտանիքի անդամների գույքային դրությանը վերաբերող մանրամասներ և տեղեկություններ, որոնք դիտարկվում և համեմատվում են Թեկնածուի կողմից ներկայացված տեղեկատվության հետ:

3. Աղբյուրների հավաստիության ստուգման համար առավել արդյունավետ է գտնել նույնաբովանդակ տեղեկատվություն մի քանի աղբյուրներից՝ դրանք համատեղելու, արժանահավատությունը գնահատելու նպատակով: Մի քանի աղբյուրներից ստացված նույնաբովանդակ տեղեկություններն ստուգվում և համադրվում են բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում ստացված այլ տվյալների հետ: Որոնումն իրականացվում է բոլոր հնարավոր որոնողական համակարգերի (որպես օրինակ՝ Google, Bing, Google Scholar, Yandex) միջոցով՝ անձի անունով, ազգանունով, զբաղեցրած պաշտոնով, ընտանիքի անդամների և փոխկապակցված անձանց տվյալներով, ինչպես նաև անձի վերաբերյալ ցանկացած տեղեկություն պարունակող վերաբերելի տվյալներով՝

հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Բացասական լուրերի հայտնաբերման դեպքում իրականացվում են լրացուցիչ համացանցային որոնողական աշխատանքներ՝ խնդրի վերաբերյալ առավել համապարփակ և արժանահավատ տեղեկություններ հավաքելու և ամբողջական պատկերացում կազմելու նպատակով: Միայն մեկ աղբյուրից ստացված, կամ լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում այլ աղբյուրներով չհաստատված տեղեկությունները, որոնք գնահատման ենթակա չեն՝ Եզրակացությամբ չեն ներկայացվում:

4. Մեդիա մոնիթորինգի ընթացքում դիտարկվում են տեղեկատվության հնարավոր բոլոր աղբյուրները.

- ԶԼՄ-ների անդրադարձ,
- Այլ հրապարակումներ՝ տեղական, միջազգային կազմակերպությունների զեկույցներ,
- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հայտարարություն կամ այլ դիտարկում, եթե առկա է կոնկրետ թեկնածուի նախկին պաշտոնեական պարտականությունների իրականացման առնչությամբ,
- Հարցազրույցներ, եթե տվյալ Թեկնածուն հանդես է եկել իր մասնագիտական պաշտոնեական լիազորությունների շրջանակներում տրված հարցազրույցներով,
- Սոցիալական ցանցերում առկա հրապարակումներ,
- Բաց տեղեկատվական հարթակներ,
- և այլն:

5. Մեդիահրապարակումները մեջբերելիս հայհոյանքներ, գռեհկաբանություն պարունակող տեղեկությունները ենթակա չեն ներառման Եզրակացության տեքստում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղղակիորեն վերաբերում են Թեկնածուի խոսքին:

6. Ուսումնասիրության առարկա են հանդիսանում նաև տեղական և միջազգային կազմակերպությունների այն բոլոր զեկույցները, որտեղ հիշատակում կա Թեկնածուի մասնագիտական, պաշտոնեական գործունեության և հիշատակված կառույցի կամ բնութագրված դեպքի հետ: Օրինակ՝ եթե ԱՄՆ պետդեպարտամենտի տարեկան զեկույցը հիշատակում է դատախազության անօրինական

գործողությունների վերաբերյալ, և այդ գործողությունների կատարումը ըստ համադրվող տվյալների, վերագրվում է կոնկրետ Թեկնածուին, ով զբաղեցրել է դատախազի պաշտոնը, ապա նման հրապարակումները ևս ենթակա են ուսումնասիրության: Հրապարակումներում առկա տվյալների համադրման և հավաստիության ստուգման նպատակով լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի կողմից կարող են կատարվել համապատասխան հարցումներ:

7. Եթե Թեկնածուի մասնագիտական գործունեությունը, նախկինում զբաղեցրած պաշտոնը առնչվում է մարդու իրավունքներին, ուսումնասիրության առարկա են հանդիսանում նաև մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումները, հայտարարությունները և այլ հրապարակումները:

8. Անձի սոցիալական կայքէջերում առկա հաշիվների ուսումնասիրությունը նպատակ ունի վերհանելու անձի՝ որպես սոցիալական անհատի նկարագիրը, և ըստ այդմ՝ հանրության կողմից վերջինիս հնարավոր ընկալումը: Սոցիալական հաշիվների ուսումնասիրությունը կարևորվում է անձի սոցիալական հարթակներում դրսևորած վարքագծի՝ կատարած հրապարակումների, գրառումների՝ բարեկրթության, քաղաքական չեզոքություն պահանջող պաշտոնների դեպքում՝ համապատասխան չեզոքության պահպանման համատեքստում:

9. Այն դեպքում, երբ անձը բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում արգելափակում է բարեվարքության հարցաթերթիկում իր կողմից ներկայացված սոցիալական ցանցի հաշիվները, որի արդյունքում Հանձնաժողովը հնարավորություն չի ունենում ուսումնասիրել դրանցում առկա տեղեկությունները՝ այդ մասին կատարվում է նշում Եզրակացության համապատասխան բաժնում:

10. Միաժամանակ, ուսումնասիրության են ենթարկվում նաև Հանձնաժողովին անձի վերաբերյալ երրորդ անձանց կողմից ներկայացված դիմումները, եթե դրանցում ներկայացված տեղեկատվությունը կարող է ազդեցություն ունենալ անձի բարեվարքության գնահատականի ձևավորման գործընթացում:

11. Վերը նշված տեղեկությունների հավաստիությունը ստացված այլ տվյալներով ստուգելու և գնահատելու արդյունքում դրանք ներառվում են Եզրակացության համապատասխան բաժնում, ինչպես նաև կից ներկայացվում են

«Հավելյալ տեղեկություններ» բաժնում: Այն դեպքում, երբ տվյալների ստուգման արդյունքում դրանք այլ աղբյուրների հետ համադրմամբ չեն հաստատվում, Հանձնաժողովը դրանք չի դիտարկում որպես բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոն, այդուհանդերձ, եթե Հանձնաժողովի մոտ մնում են մտահոգություններ պաշտոնի նշանակման դեպքում ռիսկայնության տեսանկյունից, ապա դրանց վերաբերյալ նշումներ են կատարվում Եզրակացության տեքստում, իսկ տեղեկությունների աղբյուրները ներառվում են «Հավելյալ տեղեկություններ» բաժնում:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Բարեվարքության ուսումնասիրության առանձին աղբյուր են հանդիսանում Թեկնածուի և նրա ընտանիքի անդամների կողմից նախկինում ներկայացրած բոլոր հայտարարագրերը:

2. Բարեվարքության հարցաթերթիկը ստանալուց հետո նախ հարցաթերթիկում ներկայացված տվյալների հիման վրա, այնուհետև Հայտարարագրման էլեկտրոնային համակարգում համապատասխան որոնման միջոցով ստուգվում է անձի՝ որպես պաշտոնատար անձ կամ պաշտոնատար անձի ընտանիքի անդամ հայտարարագիր ներկայացրած լինելու կամ այդպիսի պարտականություն ունենալու փաստը:

3. Ընդ որում, հայտարարատու հանդիսանալու պայմաններում այն բոլոր դեպքերում, երբ անձը ներկայացրել է հայտարարագրերի ուղղման դիմում, սակայն օրենքով սահմանված կարգով դեռևս չի կատարվել համապատասխան փոփոխություն, ուսումնասիրության առարկա են հանդիսանում նաև անձի կողմից ներկայացված նշված դիմումները[3]:

[3] Հայտարարագրերի վերլուծության մանրամասները ներկայացված են «ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ» բաժնի ներքո

ԲԱԺԻՆ 2. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԴՐՈՒՄ

1. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից ստացված պատասխանները հավաքագրվում են դրանց համար նախատեսված պանակներում, որոնց հիման վրա իրականացվում է Թեկնածուի կողմից ներկայացված տվյալների և ստացված պատասխանների համադրումը:

2. Ստացված պատասխանները և բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տեղեկությունները համադրվում են ուսումնասիրության հետևյալ սկզբունքներով.

- Տվյալների ամբողջականություն,
- Տվյալների արժանահավատություն:

3. Տվյալների ամբողջականության ուսումնասիրությունը հիմնականում ներառում է Թեկնածուի կողմից ներկայացված կոնկրետ տվյալի համեմատություն Հանձնաժողովին այլ աղբյուրներից հասանելի դարձած տվյալների հետ:

4. Տվյալների արժանահավատության ուսումնասիրությունը ենթադրում է առավել վերլուծական մոտեցում, տարբեր տվյալների համադրում, դրանց միջև կապերի բացահայտում և եզրահանգում առ այն, թե արդյոք Թեկնածուի կողմից տրամադրած այս կամ այն տվյալը հավաստի է:

5. Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներկայացված և Հանձնաժողովի կողմից ձեռք բերված տվյալների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքում կազմվում և իրավասու մարմին է ներկայացնում անձի բարեվարքության վերաբերյալ դրական կամ բացասական բնույթի խորհրդատվական եզրակացություն:

ԳԼՈՒԽ 2. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

1. Թեկնածուի կողմից հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից կատարված համապատասխան հարցումների արդյունքում ստացված պատասխանների, ինչպես նաև օրենսդրությամբ թույլատրվող եղանակներով ձեռքբերված կամ հանրամատչելի աղբյուրներից այլ կերպ Հանձնաժողովին հասանելի դարձած տեղեկատվության հետ համադրման արդյունքում:

2. Բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալներից յուրաքանչյուրը, որի առնչությամբ կատարվել է հարցում կամ առկա է հնարավորություն համապատասխանության ստուգում իրականացնել՝ Հանձնաժողովին անմիջական հասանելի տվյալների շտեմարանների միջոցով համեմատվում է ստացված տվյալների հետ, և արձանագրված յուրաքանչյուր անհամապատասխանության առնչությամբ կատարվում է համապատասխան նշում՝ Եզրակացության վերաբերելի բաժնում:

3. Արձանագրված յուրաքանչյուր անհամապատասխանություն, որն ակնհայտ իրենից ներկայացնում է Թեկնածուի կողմից Հանձնաժողովին դիտավորությամբ ոչ արժանահավատ տվյալի ներկայացում՝ կարող է դիտարկվել ինչպես որպես բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող ինքնուրույն գործոն, այնպես էլ մյուս անհամապատասխանությունների հետ համադրությամբ:

ԳԼՈՒԽ 3. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՈՒՄ

1. Թեկնածուի կողմից լրացված հարցաթերթիկի հիման վրա կազմվում է անձի բարեվարքության եզրակացության նախագիծը՝ բաղկացած 6 բաժիններից (կենսագրական տվյալներ, կրթության վերաբերյալ տեղեկություններ, աշխատանքային գործունեության և զբաղեցրած պաշտոնի (պաշտոնների) վերաբերյալ տեղեկություններ, շահերի վերաբերյալ տեղեկություններ, քրեական,

վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու, ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացված լինելու, հայցվոր կամ պատասխանող հանդիսանալու, Քրեական օրենսգրքի համաձայն քրեական ենթամշակույթին հարելու վերաբերյալ տեղեկություններ, Թեկնածուի և նրա ընտանիքի անդամների գույքային դրության վերաբերյալ ամփոփ տեղեկություններ):

2. Յուրաքանչյուր բաժնում ներառվում են համապատասխան ելակետային և բարեվարքության գնահատականի ձևավորման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Թեկնածուի վերաբերյալ ստացված այլ տվյալները Հանձնաժողովին ներկայացվում են բանավոր կարգով:

3. Ստացված պաշտոնական տվյալների հիման վրա ելակետային տվյալները համադրելու և ստուգելու արդյունքում հակասության առկայության դեպքում նախագծում ներառվում են թե՛ Թեկնածուի կողմից ներկայացված, թե՛ Հանձնաժողովի կողմից ձեռք բերված տվյալները:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Հանձնաժողովը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից ստացված պատասխանները համադրելով Թեկնածուի բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալների հետ, վեր հանելով խնդիրներն ու անհամապատասխանությունները, դրանց կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով բարեվարքության հարցաթերթիկում նշված հեռախոսահամարով, իսկ դրա անհնարինության դեպքում էլեկտրոնային փոստի հասցեով, կապ է հաստատում Թեկնածուի հետ: Թեկնածուի հետ ունեցած հեռախոսազրույցը վերջինիս տեղեկացնելուց հետո ձայնագրվում է և պահպանվում հատուկ պանակում:

2. Ըստ հաջորդականության ներկայացվում են ուսումնասիրության ընթացքում առաջացած պարզաբանման ենթակա հարցերը, որոնց առնչությամբ Թեկնածուն իր ցանկությամբ ներկայացնում է պարզաբանումներ, իսկ անհրաժեշտության դեպքում

նաև դրանք հիմնավորող փաստաթղթեր (այդ թվում՝ բանկային հաշիվների քաղվածքներ):

(2-րդ կետը լրաց. 21.04.2026 N 02-L)

3. Ըստ Թեկնածուի պահանջի, պարզաբանման ենթակա հարցերը Թեկնածուին կարող են ներկայացվել նաև գրավոր՝ էլեկտրոնային փոստի հասցեով:

4. Պարզաբանումները ներառվում են Թեկնածուի վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացության նախագծում, դրանց արժանահավատությունը և հիմնավորվածությունը բարեվարքության գնահատականի ձևավորման փուլում քննարկման առարկա դարձնելու նպատակով:

4.1. Թեկնածուից ստացած պարզաբանումների վերլուծության և համադրման արդյունքում կազմվում է Թեկնածուի բարեվարքության վերաբերյալ եզրակացության նախագիծը: Բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության նախագիծն ուղարկվում է Թեկնածուին՝ բարեվարքության հարցաթերթիկում նշված էլեկտրոնային փոստի հասցեով: Նախագծում Հանձնաժողովի անդամների անհատական քվեարկության նախնական արդյունքներն ապանձնավորվում են: Թեկնածուն եռօրյա ժամկետում կարող է բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության նախագծի վերաբերյալ ներկայացնել առարկություններ և լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր:

4.2. Հանձնաժողովը բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացության նախագծի և Թեկնածուի կողմից ներկայացված առարկությունների համադրության արդյունքում կազմում է Թեկնածուի բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը: Այն դեպքում, երբ Թեկնածուի կողմից սույն գլխի 5-րդ մասով սահմանված ժամկետում առարկություններ չեն ներկայացվում, Հանձնաժողովը Թեկնածուի բարեվարքության վերաբերյալ եզրակացությունը վերջնական քննարկման առարկա է դարձնում առանց դրանց:

(4.1, 4.2 ենթակետերը լրաց. 21.04.2026 N 02-L)

5. Այն դեպքում, երբ Հանձնաժողովը Թեկնածուի կողմից բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված կապի բոլոր միջոցներն օգտագործելով, այդուհանդերձ, հնարավորություն չի ունենում արձանագրված խնդիրների և անհամապատասխանությունների առնչությամբ ստանալ պարզաբանումներ՝

վերջիններս ներառվում են Եզրակացության համապատասխան բաժիններում՝ արտացոլելով նաև արձանագրված խնդրի կամ անհամապատասխանության առնչությամբ Հանձնաժողովի դիրքորոշումը:

6. Արձանագրված խնդրի կամ անհամապատասխանության առնչությամբ իրավասու մարմինը հնարավորություն ունի Թեկնածուին տալ հարցեր, ստանալ պարզաբանումներ և ինքնուրույն գնահատել տրված պարզաբանումների արժանահավատությունը:

ԳԼՈՒԽ 5. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԻ ԿԱԶՄՈՒՄ

1. Թեկնածուի բարեվարքության եզրակացության գնահատականը ներկայացվում է բարեվարքության եզրակացության վերջին՝ եզրափակիչ մասում:

2. Թեկնածուի բարեվարքության գնահատականը ձևավորվում է վերջինիս վերաբերյալ ձեռքբերված բոլոր տեղեկությունների ու տվյալների համադրման և յուրաքանչյուր բաղադրիչի գնահատման արդյունքում:

3. Տվյալների համադրման արդյունքում եզրահանգում կատարվում է այն դեպքերում, երբ նույն հարցի, փաստի վերաբերյալ ստացված տեղեկությունները հաստատվում են պաշտոնական աղբյուրներից ստացված մեկ կամ մի քանի տվյալներով:

4. Բոլոր այն դեպքերում, երբ համադրումը հնարավոր չէ, այսինքն՝ փաստի վերաբերյալ տեղեկությունը չի հաստատվել պաշտոնական աղբյուրից ստացված տեղեկություններով, օրինակ՝ մամուլի հրապարակում, ապա այդ տեղեկությունը ենթակա է լրացուցիչ ստուգման և գնահատման:

5.Այն դեպքում, երբ անձի (սույն մեթոդաբանությամբ սահմանված դեպքերում նաև վերջինիս ընտանիքի անդամների) վերաբերյալ մամուլի հրապարակումներով, կամ Հանձնաժողով մուտքագրված դիմումներով ներկայացված տվյալների ստուգման արդյունքում դրանք այլ աղբյուրների հետ համադրմամբ չեն հաստատվում, Հանձնաժողովը դրանք չի դիտարկում որպես բարեվարքության գնահատականի վրա

ազդեցություն ունեցող գործոն: Միաժամանակ, եթե Հանձնաժողովի մոտ մնում են մտահոգություններ պաշտոնի նշանակման դեպքում ռիսկայնության տեսանկյունից, ապա դրանց վերաբերյալ նշումներ են կատարվում Եզրակացության տեքստում, իսկ տեղեկությունների աղբյուրները ներառվում են «Հավելյալ տեղեկություններ» բաժնում:

ԲԱԺԻՆ 3. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հանձնաժողովը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներառված և ձեռք բերված տվյալների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքով կազմում և իրավասու մարմին է ներկայացնում անձի բարեվարքության վերաբերյալ դրական կամ բացասական բնույթի խորհրդատվական եզրակացություն:

2. Անձի բարեվարքության վերաբերյալ դրական եզրակացություն ներկայացվում է այն դեպքում, երբ տվյալների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքով չեն հայտնաբերվում ուսումնասիրության առարկա հանդիսացող գործոններ, կամ թեև հայտնաբերվում են անհամապատասխանություններ, սակայն դրանք անձի բարեվարքության գնահատման համար բացասական ազդեցություն չունեն:

3. Անձի բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացություն ներկայացվում է բացառապես այն դեպքում, երբ տվյալների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքով հայտնաբերվում են տվյալներ, որոնք ինքնին հանդիսանում են բավարար գործոն անձի բարեվարքության վերաբերյալ բացասական բնույթի եզրակացության տրամադրման համար, մասնավորապես՝

1) անձի և «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրա ընտանիքի անդամների գույքային դրության առնչությամբ արձանագրված այնպիսի տվյալներ, որոնք ձևավորում են ողջամիտ կասկած առ այն, որ վերջիններիս գույքի ծագումը, փոփոխությունը, իրականացրած գործարքները կամ հայտարարագրման ենթակա տվյալներն օրինական և արժանահավատ չեն, կամ գույքային դրության և փաստացի

ստացած եկամուտների միջև առկա է էական և ակնհայտ անհամապատասխանություն.

2) հիմնավոր և հավաստի տվյալներ, որոնց բնույթը, քանակը կամ դրանց ամբողջությունն էական ազդեցություն ունեն անձի մասնագիտական գործունեության անկախության, անաչառության վրա կամ ձևավորում են հանրային անվստահություն՝ նվազեցնելով հանրային իշխանության մարմինների հեղինակությունը, և որոնք վերաբերում են՝

ա. անձի կողմից նախկինում քրեական պատասխանատվության ենթարկված լինելու, նրա նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներ կայացված լինելու հանգամանքին՝ հաշվի առնելով արարքի բնույթը և դրա հնարավոր ազդեցությունը անձի հետագա մասնագիտական գործունեության վրա,

բ. անձի վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու, անձի կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանման վերաբերյալ տվյալներին, որոնք ձևավորում են բարեվարքության առնչությամբ ռիսկ՝ հաշվի առնելով արարքի բնույթը, դրա հնարավոր ազդեցությունն անձի հետագա մասնագիտական գործունեության վրա, խախտումների քանակը և դրանց առնչությամբ հնարավոր հանրային ընկալումը,

գ. անձի աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի, այդ թվում՝ իրականացրած գործողությունների (անգործության), կայացրած որոշումների վերաբերյալ տեղեկություններին, որոնք վկայում են մարդու իրավունքների խախտումների մասին, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներում առկա այնպիսի հրապարակումներ, որոնք կարող են անձի մասնագիտական գործունեության անկախության, անաչառության վերաբերյալ ձևավորել կասկած և անվստահություն՝ նվազեցնելով հանրային իշխանության մարմինների հեղինակությունը:

ԳԼՈՒԽ 2. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1. Գույքային դրության ուսումնասիրությունն իրականացվում է հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանության հիման վրա: Բարեվարքության ուսումնասիրության գործընթացում գույքային դրության գնահատումն իրականացվում է հետևյալ առանձնահատկությունների հաշվառմամբ.

2. Գույքային դրության ուսումնասիրության գործընթացը մեկնարկում է անձի՝ հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնի զբաղեցման կամ նման պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամ հանդիսանալու հանգամանքը պարզելով:

3. Այն դեպքում, երբ անձն ունի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի կամ գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր (այսուհետ՝ Հայտարարագիր) ներկայացնելու պարտականություն, ուսումնասիրության և գնահատման առարկա են հանդիսանում նաև ներկայացված հայտարարագրերը:

4. Թեկնածուի կողմից օրենքով սահմանված հայտարարագրերը ներկայացված չլինելու հանգամանքը դիտարկվում է որպես Թեկնածուի բարեվարքության բացասական գնահատական տալու համար բավարար գործոն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշվածը պայմանավորված է եղել հայտարարագրման էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդիրներով, և անձը բարեվարքության ուսումնասիրության ընթացքում ներկայացրել է հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը զրկված չի եղել վերջինիս գույքային դրության ամբողջական վերլուծություն կատարելու հնարավորությունից:

5. Թեկնածուի ընտանիքի անդամների կողմից հայտարարագիր չներկայացնելու հանգամանքը բարեվարքության բացասական գնահատական տալու համար բավարար գործոն չի գնահատվում այն դեպքերում, երբ՝

- չներկայացնելը պայմանավորված է եղել հայտարարագրման էլեկտրոնային համակարգի տեխնիկական խնդիրներով, և անձինք բարեվարքության ուսումնասիրության ընթացքում ներկայացնում են հայտարարագիրը, ինչի

արդյունքում Հանձնաժողովը չի զրկվում Թեկնածուի ընտանիքի ընդհանուր գույքային դրության ամբողջական վերլուծություն կատարելու հնարավորությունից.

- չներկայացված հայտարարագրերի ժամանակահատվածում ընդհանուր գույքային դրության վրա ազդեցություն ունեցող գործարքներ չեն իրականացվել, ինչպես նաև հետագայում ներկայացված հայտարարագրերում կամ բարեվարքության հարցաթերթիկում առկա չեն եղել այնպիսի գույքեր, որոնց առաջնային ծագման աղբյուրն անհրաժեշտ կլիներ գնահատել նախորդ հայտարարագրերի ուսումնասիրության միջոցով:

6. Հայտարարագրերում և (կամ) բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալները համադրվում են պաշտոնական հարցումների արդյունքում ներկայացված տվյալների հետ, վեր են հանվում և առանձին արձանագրվում են անհամապատասխանությունները:

7. Նույնաբովանդակ անհամապատասխանությունները (օրինակ՝ տարբեր տարիների հայտարարագրերում առկա է տարեվերջին և տարեսկզբին հայտարարագրված տվյալների միջև անհամապատասխանություն) արձանագրվում են մեկ կետի ներքո և գնահատման առարկա են դառնում՝ հաշվի առնելով մնացորդների տարբերության չափը, ինչպես նաև տարեկան ընթացիկ ծախսը (հայտարարատուի և իր ընտանիքի անդամների կողմից հաշվետու ժամանակահատվածում հայտարարագրման ենթակա գույքի ձեռքբերումներից և հայտարարագրման ենթակա ծախսերից տարբերվող ծախսերի (վճարումների) հաշվարկային մեծությունը):

(7-րդ կետը լրաց. 21.04.2026 N 02-L)

8. Եթե դրամական միջոցների միջև առկա անհամապատասխանության արժեքը չի գերազանցում 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը[4] նշված անհամապատասխանությունը չի արձանագրվում:

9. Հայտարարագրերում սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելը որպես կանոն չի դիտարկվում որպես Թեկնածուի բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոն, եթե նշված տվյալները լրացման կարգին

[4] Սահմանաչափը պայմանավորված է «Հանրային ծառայության մասին» օրենքով եկամուտի համար սահմանված սահմանաչափով:

չտիրապետելու հետևանք են և չեն հանգեցրել գույքային դրության իրական պատկերի փոփոխության: Որպես օրինակ, եթե գույքի օտարման գործարքը հայտարարագրվել է համապատասխան բաժնում, սակայն դրա օտարումից ստացված եկամուտը չի հայտարարագրվել հայտարարագրի «Եկամուտներ» բաժնում:

10. Այն դեպքում, երբ հայտարարագրերում կամ բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված սխալ կամ ոչ ամբողջական տվյալները Թեկնածուի պնդմամբ տեխնիկական վրիպակի հետևանք են, բայց հաշվի առնելով դրանց քանակը կամ բնույթը՝ Հանձնաժողովին հնարավորություն չեն տալիս գույքային դրության վերաբերյալ ճշգրիտ հաշվարկներ կատարելու, Հանձնաժողովը նշված հանգամանքը դիտարկում է որպես Թեկնածուի բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոն: Որպես օրինակ, Թեկնածուն կենցաղային ծախսերը հոգում է այլ անձանցից ստացված նվիրատվությունների հաշվին, սակայն նշված նվիրատվությունները երբևէ հայտարարագրերում չեն ներկայացվել որպես եկամուտ:

11. Այն բոլոր դեպքերում, երբ Թեկնածուի և վերջինիս ընտանիքի անդամների գույքի առաջնային ծագման աղբյուրը հիմնավորող տվյալներ ներկայացված չեն կամ դրանք չեն հիմնավորվում հայտարարագրված և (կամ) պետական մարմիններից ստացված տվյալներով (օրինակ՝ անձը 2021 թվականին հայտարարագրել է առանձնատան ձեռքբերում, մինչդեռ նախորդ տարիներին հայտարարագրված դրամական միջոցներով և եկամուտներով նշված գույքի ձեռքբերումը չի հիմնավորվում), Հանձնաժողովն իրավասու է Թեկնածուից պահանջելու ներկայացնել պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր:

12. Թեկնածուի և վերջինիս ամուսնու գույքային դրությունը բոլոր դեպքերում գնահատվում է որպես մեկ ամբողջություն, իսկ համատեղ բնակվող անձանց գույքային դրությունը՝ կախված դրանց ազդեցությունից և առնչությունից Թեկնածուի գույքային դրության վրա:

13. Գույքի ծագման աղբյուրը գնահատելիս գնահատման առարկա են դառնում հետևյալ հանգամանքները.

- Եթե Թեկնածուի կողմից չեն ներկայացվել գույքի ծագումը հիմնավորող փաստաթղթեր, կամ ներկայացված փաստաթղթերը Հանձնաժողովի մոտ ձևավորում

են ողջամիտ կասկած առ այն, որ վերջիններիս գույքի ծագումը, կամ փոփոխությունը օրինական և արժանահավատ չէ՝ Հանձնաժողովը նշված հանգամանքը կարող է գնահատել որպես բարեվարքության բացասական եզրակացություն տալու համար բավարար գործոն:

- Գույքի ծագման աղբյուրի գնահատման վրա համադրության մեջ ազդեցություն ունեցող բացասական գործոն կարող է դիտարկվել նաև Թեկնածուի կամ վերջինիս ընտանիքի անդամների կողմից վերաբերելի ժամանակահատվածում հանրային և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու հանգամանքը, եթե պետական մարմիններից ստացված տվյալներով նշված գույքի ծագումը չէր կարող հիմնավորվել անձի օրինական եկամուտներով:

-Այն դեպքում, երբ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Թեկնածուի ընտանիքի անդամներին, և Թեկնածուն գույքային իրավունք չունի նշված գույքի նկատմամբ, Հանձնաժողովը նշված հանգամանքը դիտարկում է որպես Թեկնածուի և վերջինիս ընտանիքի անդամների ընդհանուր գույքային դրության արժանահավատության ռիսկի տեսանկյունից:

- Այն դեպքում, երբ որպես գույքի ծագման աղբյուր նշվում է նվիրատվությունը, պարզելու համար Թեկնածուի նշած անձի կողմից նվիրատվություն կատարելու հանգամանքի արժանահավատությունը, գնահատման առարկա են դառնում նվիրատուի և նվիրառուի կապի բնույթը, ինչպես նաև նվիրատուի ընդհանուր գույքային դրությունը:

- Այն բոլոր դեպքերում, երբ Թեկնածուի կողմից ներկայացվում են նվիրատուի եկամուտները և նվիրատվության հանգամանքը հիմնավորող փաստաթղթեր, միաժամանակ, լրացուցիչ կասկածներ չեն առաջանում նվիրատուի և նվիրառուի կապի բնույթի, նվիրատուի եկամուտ-ծախս հարաբերակցության համատեքստում նվիրատվություն կատարելու հնարավորության տեսանկյունից, արձանագրվում է, որ ներկայացված տվյալները փարատել են գույքի ծագման աղբյուրի առնչությամբ առկա մտահոգությունները:

- Այն դեպքում, երբ Թեկնածուի կողմից ներկայացվում են նվիրատուի եկամուտները հիմնավորող փաստաթղթեր, սակայն նվիրատվության հանգամանքը հիմնավորող փաստաթղթեր առկա չեն, կամ, որպես օրինակ, դրամական միջոցները

նվիրաբերվել են կանխիկ եղանակով, կախված գույքի չափից՝ Հանձնաժողովի կողմից նշված հանգամանքը կարող է դիտարկվել ինչպես ինքնուրույն գործոն, այնպես էլ այլ անհամապատասխանությունների հետ համադրությամբ:

- Այն դեպքում, երբ Թեկնածուն նշում է նվիրատուի տվյալները, սակայն չի կարողանում ներկայացնել վերջինիս գույքային դրությունը հիմնավորող փաստաթղթեր, Հանձնաժողովն իրավասու է պետական մարմինների էլեկտրոնային շտեմարաններից լրացուցիչ հարցումներ կատարելու, բաց աղբյուրների ուսումնասիրության միջոցով ինքնուրույն ստուգելու անձի գույքային դրությունը և նվիրատվություն կատարելու հանգամանքի հնարավորությունը:

- Այն դեպքում, երբ որպես գույքի ծագման աղբյուր նշվում են խնայողությունները, Հանձնաժողովն իրավասու է Պետական եկամուտների կոմիտեի տվյալների շտեմարանից էլեկտրոնային հարցման միջոցով պարզելու վերաբերելի ժամանակահատվածում անձի օրինական եկամուտները: Եթե անձի կողմից հղում է կատարվում այնպիսի ժամանակահատվածի, որի տվյալները հասանելի չեն Պետական եկամուտների կոմիտեի տվյալների շտեմարանում, Հանձնաժողովը Թեկնածուից պահանջում է ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր: Եթե եկամուտները հիմնավորող փաստաթղթերը վաղեմությունից կամ այլ պայմաններից ելնելով հասանելի չեն, Հանձնաժողովը հնարավորություն է տալիս անձին ներկայացնելու աշխատելու, իրականացրած գործունեության, կամ այլ պասիվ եկամուտների փաստը հավաստող ցանկացած փաստաթուղթ և հնարավոր եկամտի չափը դիտարկում է միջինացված հաշվարկներով:

- Այն դեպքում, երբ որպես գույքի ծագման աղբյուր նշվում են գյուղատնտեսական եկամուտները, Հանձնաժողովն իրավասու է Թեկնածուից պահանջել հավաստող փաստաթղթեր, կամ կարող է օպերատիվ-հետախուզական և այլ մարմիններին հարցումներ կատարելու միջոցով ճշտել տվյալների արժանահավատությունը:

- Ծագման աղբյուրի առնչությամբ կասկածների բացակայության պարագայում 5 միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող կանխիկ դրամական միջոցների առկայությունը Հանձնաժողովը գնահատում է որպես

ռիսկային, բայց չի դիտարկում որպես Թեկնածուի բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող բավարար գործոն:

14.Գույքային դրության համատեքստում Թեկնածուի բարեվարքության գնահատականի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոններ են հանդիսանում նաև՝

- Գործարքների օրինականությունը կամ արժանահավատությունը. մասնավորապես, եթե անձի կողմից կատարված գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներն էականորեն տարբերվում են շուկայական, կադաստրային արժեքներից, կամ առկա է գործարքի արժանահավատության առնչությամբ այլ կասկած (օրինակ՝ սնանկության գործընթացին նախորդող ժամանակահատվածում անձն իր խոշոր դրամական միջոցները փոխառության է հանձնում այլ անձի կամ անձի կամ վերջինիս հետ փոխկապակցված անձանց համայնքի ղեկավար լինելու ժամանակահատվածում անձը արտոնյալ պայմաններում համայնքից ձեռք է բերում անշարժ գույքեր), Հանձնաժողովը նշված հանգամանքները դիտարկում է որպես բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոն, եթե իրականացրած գործարքներն օրինական և արժանահավատ չեն: Գործարքի օրինականությունը ենթակա է գնահատման նաև հարկային պարտավորությունների պատշաճ կատարման համատեքստում:

- Հայտարարագրված եկամուտների և պետական մարմիններից ձեռքբերված տվյալների միջև անհամապատասխանություններ.

Այն դեպքում, երբ անձը հայտարարագրում կամ բարեվարքության հարցաթերթիկում ներկայացնում է կոնկրետ գործունեությունից ստացված եկամուտ, որի վերաբերյալ տեղեկությունները չեն ստացվում պետական մարմիններից, Հանձնաժողովն իրավասու է Թեկնածուից պահանջելու ներկայացնել համապատասխան պայմանագրերը կամ այլ հիմնավորող փաստաթղթեր: Որպես օրինակ, անձը հայտարարագրել է կրթական գործունեության արդյունքում ստացված եկամուտ, սակայն տվյալը չի հաստատվել ՊԵԿ-ից ձեռքբերված տեղեկություններով, կամ ներկայացված է ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտ (հասույթ), մինչդեռ բաշխված շահաբաժինների վերաբերյալ տվյալներ չեն ստացվել: Տվյալ դեպքում, եթե ներկայացված փաստաթղթերով հաստատվում է նշված փաստը,

և առկա չէ հարկային պարտավորություններից խուսափելու կասկած՝ Հանձնաժողովը նշված հանգամանքը չի դիտարկում որպես բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոն:

Այն դեպքում, երբ անձի կողմից ներկայացված եկամուտը վերջինիս պնդմամբ ձևավորվել է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում, մինչդեռ նշված եկամուտները ողջամտորեն չեն հիմնավորվում Պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալներով (օրինակ՝ անձը ներկայացրել է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված պայմանական եկամուտ, սակայն վերջինիս նշած կազմակերպության վերաբերելի ժամանակահատվածի իրացման շրջանառությունը էականորեն պակաս է եղել հայտարարագրված եկամտից), Հանձնաժողովը տվյալ դեպքում ուսումնասիրության առարկա է դարձնում պայմանագրերի պայմանները և յուրաքանչյուր դեպք գնահատում է օրենսդրական և պայմանագրային առանձնահատկություններից ելնելով:

- Բանկային հաշիվների համախառն մուտքերի-ելքերի և ստացված եկամուտների միջև էական տարբերության արդյունքում հայտնաբերված խնդիրները.

Այն դեպքում, երբ բանկային հաշիվների համախառն մուտքերը և ելքերը մինչև երեք անգամ գերազանցում են անձի ստացած եկամուտները, Հանձնաժողովը նշված հանգամանքը չի դիտարկում որպես ռիսկային գործոն՝ հաշվի առնելով բանկային հաշիվների միջև փոխանցումների հավանականությունը: Նշված սահմանաչափը գերազանցող շրջանառության դեպքում Հանձնաժողովն իրավասու է անձից պահանջել ներկայացնելու բանկային հաշիվների քաղվածք: Եթե անձը քաղվածքը չի ներկայացնում կամ քաղվածքի ներկայացման պայմաններում ևս չեն փարատվում բանկային հաշիվների գործարքների առնչությամբ առկա մտահոգությունները՝ Հանձնաժողովը նշված հանգամանքը դիտարկում է որպես Թեկնածուի բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող բացասական գործոն:

Այն դեպքում, երբ գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանություններն առանձին-առանձին բացասական գործոն չեն գնահատվել, սակայն իրենց համակցության մեջ ձևավորել են Թեկնածուի և վերջինիս ընտանիքի անդամների ընդհանուր գույքային դրության արժանահավատության

առնչությամբ ռիսկ, Հանձնաժողովը նշված հանգամանքը դիտարկում է որպես Թեկնածուի բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոն:

ԳԼՈՒԽ 3. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ԴՐՍԵՎՈՐԱԾ ՎԱՐՔԱԳԾԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ) ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1. Թեկնածուի՝ դրսևորած վարքագծի գնահատումն իրենից ենթադրում է հարցաթերթիկի մի քանի բաժինների համաժամանակյա վերլուծության և տվյալների համադրման արդյունքում փաստերի գնահատում: Մասնավորապես, սույն բաղադրիչի ներքո գնահատվում են անձի կողմից կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, վարքագծի կանոնների, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանումը, անձի կողմից վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքները:

2. Բարեվարքության այս բաղադրիչի ուսումնասիրության և գնահատման համար բացի արդեն իսկ պաշտոնական աղբյուրներից ձեռքբերված տվյալներից կարող են իրականացվել նաև նպատակային հարցազրույցներ: Այն պարագայում, երբ Թեկնածուն նախկինում զբաղեցրել է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն, Հանձնաժողովն ուսումնասիրում է նաև ներքին արխիվները՝ անհամատեղելիության, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ շահերի բախման դեպքերի բացահայտման նպատակով: Անձի աշխատանքից ազատվելու հանգամանքը ևս Հանձնաժողովի կողմից հատուկ ուսումնասիրության առարկա է դարձվում:

3. Կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը գնահատվում է որպես Թեկնածուի բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող ինքնուրույն գործոն: Կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի ուսումնասիրության շրջանակներում քննարկման առարկա կարող են դառնալ նաև դեպքի ամբողջական հանգամանքները և բնույթը՝ միաժամանակ չվերազանցելով

օրենսդրությամբ կոնկրետ մարմնին վերապահված անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասությունը:

4. Կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու բաղադրիչի տեսանկյունից բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոններ են հանդիսանում՝

- Թեկնածուի մասնագիտական (աշխատանքային) գործունեության ոլորտը և հավակնած պաշտոնը,
- Կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու դեպքերի քանակը,
- Խախտման բնույթը և դրա հնարավոր ազդեցությունը Թեկնածուի հետագա մասնագիտական գործունեության վրա,
- Օրենքով նախատեսված դեպքերում նաև՝ կարգապահական տույժի տեսակը, դրա կիրառման վաղեմությունը:

5. Առանձին կատեգորիայի պաշտոնների հավակնող թեկնածուների կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը, կախված կարգապահական տույժի տեսակից, առավել մեծ ազդեցություն կարող է ունենալ բարեվարքության գնահատականի վրա: Ընդ որում, Թեկնածուի աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքն ուսումնասիրվում է անկախ օրենսդրությամբ սահմանված կարգով կարգապահական տույժը հանված կամ մարված լինելու հանգամանքից:

6. Անձի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի ուսումնասիրության համատեքստում գնահատվում է նաև վերջինիս նկատմամբ կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելու խրախուսանքի կիրառումը:

7. Անձի կողմից աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը գնահատման առարկա դառնում է նաև այն դեպքում, երբ ծառայողական քննության կամ կարգապահական վարույթի արդյունքներով որոշվել է անձին կարգապահական պատասխանատվության չենթարկել: Որպես օրինակ, կարգապահական պատասխանատվության չենթարկելու որոշմամբ հաստատվել է

անձի՝ խախտում կատարած լինելու հանգամանքը, բայց վարույթն իրականացնող մարմնի գնահատմամբ այն բավարար չի եղել պատասխանատվության ենթարկելու համար, կամ անձը պատասխանատվության չի ենթարկվել վաղեմության ժամկետներն անցած լինելու, վարույթն իրականացնող մարմնի քվորումի բացակայության հանգամանքներով պայմանավորված:

8. Անձի կողմից վարքագծի կանոնների պահպանման հարցի գնահատումը սերտորեն փոխկապակցված է կարգապահական վարույթի շրջանակներում անձի վարքագծի քննարկման հարցի հետ: Այդուհանդերձ, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ անձի դրսևորած վարքագծի վերաբերյալ տեղեկություններն արտացոլված են այլ աղբյուրներում: Որպես օրինակ, անձի նկատմամբ քրեական վարույթով կայացված որոշմամբ հաստատվել են դրսևորած վարքագծի առնչությամբ փաստեր, որոնք բավարար չեն եղել վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու համար, բայց և անկողմնակալ դիտորդի տեսանկյունից անվստահություն և կասկածներ են առաջացրել, ինչպես վերջինիս կողմից իր պաշտոնեական լիազորությունների պատշաճ, անկողմնակալ և անաչառ իրականացման, այնպես էլ ընդհանուր համակարգի նկատմամբ՝ նվազեցնելով հանրային իշխանության մարմինների հեղինակությունը: Նշվածի առնչությամբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Թեկնածուի իրականացրած գործողությունները (անգործությունը), կայացրած որոշումների վերաբերյալ տեղեկությունները, որոնք վկայում են մարդու իրավունքների խախտումների մասին, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներում վերոնշյալի վերաբերյալ առկա հրապարակումները:

9. Տարբեր զեկույցներում (այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի, հասարակական կազմակերպությունների կողմից հրապարակած զեկույցներ), զանգվածային լրատվության միջոցներում անձի վարքագծի առնչությամբ ներկայացված տվյալները համադրվում են պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ:

10. Անձի դրսևորած վարքագիծը յուրաքանչյուր դեպքով գնահատվում է առանձին՝ հաշվի առնելով անձի զբաղեցրած և (կամ) հավակնած պաշտոնները,

վարքագծի բնույթը, դրա կրկնվելու միտումը, անկողմնակալ դիտորդի մոտ դրա առնչությամբ ձևավորված կարծիքը[5]:

11. Բաց աղբյուրների, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների, հարցազրույցների, անձի վերաբերյալ կայացրած որոշումների ուսումնասիրության արդյունքում գնահատվում է նաև վերջինիս աշխատանքային գործունեության ընթացքում իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա մասնավոր շահերի իրական կամ հավանական ազդեցությունը: Անձի կողմից շահերի բախման պահանջների պահպանման գնահատումն իրականացվում է նաև վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող (զբաղեցրած) անձանց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված լինելու հանգամանքների հետ համադրմամբ:

12. Թեկնածուի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող (զբաղեցրած) անձանց հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված լինելու հանգամանքը բարեվարքության ուսումնասիրության շրջանակներում գնահատման առարկա է դառնում անձի՝ համապատասխան պաշտոնի նշանակման պարագայում հնարավոր շահերի բախման առկայության, ինչպես նաև անձի՝ մասնագիտական առաջխաղացման վրա ունեցած կամ հնարավոր ազդեցության տեսանկյունից: Հիշյալ հանգամանքը չի դիտարկվում որպես անձի բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող ինքնուրույն գործոն, և գնահատվում է միայն «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով շահերի բախման հանգեցնող հնարավոր գործողությունների կամ անգործության հանգամանքը: Մասնավորապես, սույն պարագայում գնահատման

---

[5] «Անկողմնակալ դիտորդ» եզրույթը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննարկել է դատարանի անկախության և անաչառության հարցի համատեքստում՝ նշելով, որ անկողմնակալ դիտորդն այն անձն է, ով փաստերի և վարույթի մասին ամբողջական տեղեկություններ ունենալով իրավիճակն օբյեկտիվորեն դիտում է կողքից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կարևորելով անկողմնակալ դիտորդի մոտ ձևավորվող ընկալումը, ընդգծել է, որ անկողմնակալ դիտորդը, ընդհանուր առմամբ, մտահոգվելու որևէ պատճառ չպիտի ունենա գործի հանգամանքներով կայացված որոշման, ինչպես նաև դատավորների՝ անկախության և անաչառության վերաբերյալ (տե՛ս 2005 թվականի օգոստոսի 25-ին CLARKE against the United Kingdom թիվ 23699/02, 2003 թվականի դեկտեմբերի 16-ի COOPER v. THE UNITED KINGDOM թիվ 48843/99 որոշումները)

առարկա են դառնում ազգակցական և խնամիական կապերով պայմանավորված նշանակումները, հովանավորչության դրսևորումները, շահերի բախման հանգամանքներում գործելը: Որպես օրինակ՝ Թեկնածուի հետ ազգակցական կապ ունեցող անձի՝ վերջինիս ենթակայությամբ պաշտոնի նշանակումը կարող է գնահատվել որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող բացասական գործոն: Նույնը վերաբերում է Թեկնածուի՝ նույն սկզբունքով որևէ պաշտոնի նշանակմանը: Այն դեպքերում, երբ Թեկնածուն կամ նրա հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք կունենան բաժնեմասնակցություն առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններում, ARMEPS համակարգի միջոցով ստուգվում է այդ կազմակերպությունների մասնակցությունը պետական գնումների շրջանակում իրականացված մրցույթներին՝ Թեկնածուի կողմից հնարավոր շահերի բախման կամ հովանավորչության դրսևորումների բացահայտման նպատակով:

13. Այն դեպքերում, երբ Թեկնածուի ընտրման կամ նշանակման պարագայում վերջինս աշխատելու է իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձի հետ համատեղ, եթե նրանց աշխատանքը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ, Հանձնաժողովն արձանագրում է Թեկնածուի նշանակման պարագայում ծագող հավանական շահերի բախման հնարավորությունը՝ եզրակացությամբ ուղղորդելով անթույլատրելի վարքագծի դրսևորումից ձեռնպահ մնալուն: Նշվածը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ Թեկնածուին նշանակելու, ընտրելու իրավասություն ունեցող անձի (կոլեգիալ մարմնի դեպքում՝ անդամի) և Թեկնածուի միջև առկա է իրական կամ հավանական շահերի բախման իրավիճակ:

14. Անձի կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանման գնահատումն իրականացվում է այլ բաժինների տվյալների հետ համադրմամբ:

15. Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումները հիմնականում վեր են հանվում գույքային դրության վերլուծության շրջանակներում: Այսպես, եթե անձի գույքային դրության վերլուծության շրջանակներում պարզվել է, որ անձը պաշտոնավարման ընթացքում կատարել է այլ աշխատանք (բացառությամբ

օրենքով թույլատրելի աշխատանքներից) և դրա դիմաց ստացել վարձատրություն, կամ Պետական ռեգիստրի գործակալությունից ստացված տեղեկություններով հաստատվել է, որ անձն ունի բաժնեմասնակցություն գործող առևտրային կազմակերպությունում, և նշված մասնակցությունն օրենքով սահմանված կարգով հանձնված չէ հավատարմագրային կառավարման, նշված տեղեկատվությունը գույքային դրության համատեքստում վերլուծվելուց զատ դիտարկվում է նաև անհամատեղելիության պահանջների խախտման համատեքստում և գնահատվում որպես բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող բացասական գործոն:

16. Անձի կողմից կենսագրական տվյալներում առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու կամ կուսակցական պատկանելիություն ունենալու հանգամանքը գնահատվում է կախված անձի զբաղեցրած կամ հավակնած պաշտոնից: Որպես օրինակ, եթե անձը, զբաղեցնելով դատավորի պաշտոն, անդամակցում է կուսակցությանը[6], նշված հանգամանքն ինքնին բավարար է անհամատեղելիության համատեքստում բացասական գործոն դիտարկվելու համար:

17. Եթե Թեկնածուն (տվյալ պահին քաղաքական չեզոքություն չպահանջող պաշտոն զբաղեցնող անձի դեպքում), ունենալով կուսակցական պատկանելիություն՝ այդ թվում նախկինում, հավակնում է նշանակվելու կամ ընտրվելու քաղաքական չեզոքություն պահանջող պաշտոնում՝ Հանձնաժողովը տվյալ հանգամանքը դիտարկում է անձի հրապարակային ելույթների, սոցիալական կայքերում կատարած հրապարակումների, անձի հանրային ընկալման տեսանկյունից: Այս դեպքում եզրակացությամբ մանրամասն նշվում են բոլոր ռիսկերը, Հանձնաժողովի կողմից եզրակացությամբ նշանակող կամ ընտրող մարմնին առաջարկվում է ընտրության փուլում անձին տալ համապատասխան հարցեր, ստանալ պատասխաններ, գնահատել դրանց ազդեցությունը Թեկնածուի հետագա մասնագիտական գործունեության վրա: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ

---

[6] «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ հիմնադիր, կուսակցությունում պաշտոն զբաղեցնել, կուսակցության անունից ելույթներ ունենալ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատավորը հրապարակային ելույթներում և ցանկացած այլ հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

պաշտոնների դեպքում (օրինակ՝ Գլխավոր դատախազ, Սահմանադրական դատարանի դատավոր, Բարձրագույն դատական խորհրդի անդամ, Վճռաբեկ դատարանի դատավոր) միջազգային պահանջների համաձայն՝ կարևորվում է ոչ միայն Թեկնածուի առաջադրմանը և ընտրությանը ներկայացվող պահանջների գործնականում կիրառումը, այլ նաև դրանց օբյեկտիվության վերաբերյալ հանրային ընկալումը՝ անձի կուսակցական պատկանելիությունը կամ հանրային տիրույթում քաղաքական բնույթի խոսքով[7] հանդես գալու հանգամանքը, կախված հավակնած պաշտոնի ռիսկայնությունից, այլ գործոնների հետ համադրությամբ կարող է դիտարկվել որպես անձի բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձեռքբերված տվյալների ամբողջությունը կարող է ազդեցություն ունենալ անձի հետագա մասնագիտական գործունեության անկախության, անաչառության վրա՝ ձևավորելով հանրային անվստահություն, նվազեցնելով հանրային իշխանության մարմինների հեղինակությունը:

ԳԼՈՒԽ 4. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԿԱՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1. Անձի կողմից նախկինում քրեական պատասխանատվության ենթարկված լինելու, նրա նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներ կայացված լինելու հանգամանքը, հաշվի առնելով արարքի բնույթը և դրա հնարավոր ազդեցությունը անձի հետագա մասնագիտական գործունեության վրա, հանդիսանում է համապատասխան պաշտոնի հավակնող Թեկնածուի բարեվարքության գնահատականի վրա էական ազդեցություն ունեցող գործոններից մեկը:

---

[7] Որպես քաղաքական բնույթի խոսք (այդ թվում՝ հարցազրույցներ, ելույթներ, հրապարակումներ) հասկացվում է քաղաքական ուժի, կուսակցությանը կամ քաղաքական դերակատարի սատարող, կամ կոնկրետ քաղաքական ուժի, կուսակցությանը կամ քաղաքական դերակատարի գործունեությունը քննադատող խոսքը:

2. Բոլոր այն դեպքերում, երբ անձի կողմից բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալներից կամ պետական մարմիններ կատարված հարցումների արդյունքում ստացված պատասխաններից պարզ է դառնում, որ անձն ունի (ունեցել է) դատվածություն, անձի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում կամ կայացված է քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներ, Հանձնաժողովը լրացուցիչ հարցման միջոցով պետական մարմիններից հայցում է համապատասխան որոշումների պատճենները: Հանձնաժողովն ուսումնասիրում է անձի վերաբերյալ կայացված որոշումները, գնահատում դրանցում առկա փաստերը դրսևորած վարքագծի համատեքստում:

3. Եթե անձի նկատմամբ քրեական վարույթով կայացված որոշմամբ հաստատվել են դրսևորած վարքագծի առնչությամբ փաստեր, որոնք բավարար չեն եղել վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու համար, բայց և անկողմնակալ դիտորդի տեսանկյունից անվստահություն և կասկածներ են առաջացրել ինչպես վերջինիս կողմից իր պաշտոնեական լիազորությունների պատշաճ, անկողմնակալ և անաչառ իրականացման, այնպես էլ ընդհանուր համակարգի նկատմամբ, Հանձնաժողովը նշված հանգամանքը գնահատում է սույն գլխի 3-րդ բաժնի՝ անձի բարեվարքությունը դրսևորած վարքագծի համատեքստում:

4. Թեկնածուի կողմից դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածությունը Հանձնաժողովի կողմից գնահատվում է որպես բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող առանձին գործոն, նույնիսկ այն դեպքում, երբ օրենքով սահմանված կարգով դատվածությունը հանված կամ մարված է: Դիտավորյալ հանցագործության համար Թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու հանգամանքը, այդ թվում՝ վկա-կասկածյալի կարգավիճակով անձի քրեական վարույթին ներգրավված լինելու կամ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցված լինելու հանգամանքը՝ կախված արարքի բնույթից, հավակնած պաշտոնից, կարող է դիտարկվել որպես բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող առանձին գործոն: Որպես օրինակ, եթե անձին մեղսագրվել է կաշառք ստանալու արարք և նրա նկատմամբ կայացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով, նշված հանգամանքը

գնահատվում է որպես Թեկնածուի բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող բացասական գործոն:

5. Անզգուշությամբ կատարված հանցագործության համար դատվածությունը գնահատվում է այլ գործոնների հետ համադրությամբ: Կախված արարքի հանգամանքներից (օրինակ՝ հանցագործության կատարումը կապված է պաշտոնեական պարտականությունների կատարման հետ) նշված հանգամանքը ևս կարող է գնահատվել որպես բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող առանձին գործոն: Հարկ է նշել, որ վերոնշյալ տվյալի ստուգումը ներառում է անձի ողջ կյանքի ընթացքն ընդգրկող վերաբերելի տեղեկատվությունը:

6. Վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը ենթակա է ուսումնասիրության վերջին 5 տարիների համար: Բացառություն է կազմում ճանապարհային երթևեկության խախտումների վերաբերյալ ուսումնասիրությունը, որը կատարվում է բարեվարքության հարցաթերթիկի լրացման օրվան նախորդող 12 ամիսների համար:

7. Վարչական պատասխանատվության ենթարկված լինելը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

- խախտման բնույթը,
- խախտումների քանակը, պարբերականությունը
- կատարման վաղեմությունը:

8. Եթե ՃԵԿ կանոնների խախտումների քանակը չի գերազանցում 10-ը, և դրանք իրենց բնույթով հանրային վտանգավորության աստիճանից ռիսկային չեն, Հանձնաժողովը վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը չի դիտարկում որպես բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոն:

9. Այն դեպքերում, երբ վարչական պատասխանատվության հիմք հանդիսացող խախտումներն առնչվել են հասարակական վայրում անսթափ վիճակում գտնվելու, վթարային իրավիճակ ստեղծելու, անձի առողջությանը թեթև վնաս հասցնելու, թմրամիջոց պահելու դեպքերին, ինչպես նաև պաշտոնատար անձանց պարագայում՝ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիր օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելուն, դրանք կարող են դիտարկվել որպես բարեվարքության

գնահատականի վրա ազդեցություն ունեցող ինչպես ինքնուրույն գործոն, այնպես էլ կարող են դիտարկվել այլ գործոնների հետ համադրությամբ: Սույն կետով չնախատեսված դեպքերում, կախված իրավախախտման բնույթից և քանակից, Հանձնաժողովը դրանք կարող է դիտարկել բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող այլ գործոնների հետ համադրությամբ:

10. Որպես առանձին գործոն կարող է դիտարկվել նաև պաշտոնատար անձի կողմից այնպիսի կանոնների խախտում թույլ տալու հանգամանքը, որոնց պահպանմանը հետևելը, հսկողությունը կամ վերահսկողությունը ներառված է իր լիազորությունների շրջանակում:

ԳԼՈՒԽ 5. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՀԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1. Թեկնածուի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության գնահատումը ներառում է հետևյալ հանգամանքների ուսումնասիրություն՝

- Թեկնածուի կամ նրա ընտանիքի անդամի կողմից քրեական ենթամշակույթ կրող անձի հետ (օրինակ՝ օրենքով գող, քրեական հեղինակություն) ազգակցական կամ ընկերական կապի առկայություն,
- քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ անհատական հանդիպման վերաբերյալ տեղեկատվություն,
- քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ հեռախոսային կամ այլ հեռահար հաղորդակցություն ունենալու վերաբերյալ տեղեկատվություն,
- քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կամ անձի հետ անձնական, աշխատանքային կամ այլ կապ ունենալու վերաբերյալ տեղեկատվություն

2. «Քրեական ենթամշակույթ» եզրույթի մեկնաբանման համար անհրաժեշտ է վերլուծել վերաբերելի օրենսդրությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի՝

- 322-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը պահպանող (օրենքով գող կամ քրեական հեղինակություն) է համարվում այն անձը, որը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, համարվում է հեղինակություն և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման համար տալիս է հրահանգներ, կազմակերպում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կամ մասնակցում է դրանց կամ կազմակերպում կամ իրականացնում է դրամական միջոցների հավաքագրում (այդ թվում՝ մոլախաղերի միջոցով) կամ տնօրինում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման միջոցով ստացված անօրինական օգուտը կամ կատարում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ.
- 323-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում (գողական աշխարհ) է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը:

3. Այս առումով հարկ է ընդգծել, որ որպես «քրեական ենթամշակույթի» կողմնորոշիչ բնութագրում հանդես են գալիս վերոնշյալ հասկացությունները: Այդուհանդերձ, այս բաղադրիչի գնահատման աղբյուր են հանդիսանում ինչպես վերոնշյալ հոդվածներով նախաձեռնված քրեական վարույթներով կայացված դատավարական ակտերը, այնպես էլ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից տրամադրված, մեդիա մոնիթորինգի,

հարցազրույցների արդյունքում Հանձնաժողովի կողմից ձեռքբերված տեղեկությունները:

4. Այսպես, այն բոլոր դեպքերում, երբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է անձի կողմից քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու, ստանալու, պահպանելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու արարքները, Հանձնաժողովը նշված հանգամանքները դիտարկում է որպես Թեկնածուի բարեվարքության գնահատականի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոն:

5. Միաժամանակ, հաշվի առնելով քրեական ենթամշակույթին առնչվող հանցավոր արարքների բարձր լատենտայնությունը[8]՝ այն բոլոր դեպքերում, երբ այլ աղբյուրներով (օպերատիվ տեղեկություններ, ՁԼՄ հրապարակումներ, հարցազրույցներ) առկա լինեն տվյալներ, որոնց համաձայն՝ անձը հանրային ընկալման տեսանկյունից դիտարկվում է որպես քրեական ենթամշակույթին հարող՝ կախված տվյալ ընկալման տարածվածության աստիճանից և այն հիմնավորող հանգամանքներից՝ Հանձնաժողովը նշված հանգամանքը կարող է դիտարկել բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող այլ գործոնների հետ համադրությամբ: Ընդ որում, եթե նշված տեղեկությունները բավարար արժանահավատ չեն բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունենալու համար, Հանձնաժողովը դրանք ներառում է համապատասխան բաժնի տեքստում՝ նշանակող կամ ընտրող մարմնին առաջարկելով Թեկնածուին տալ նաև դրանց վերաբերյալ հարցեր, գնահատել դրանց արժանահավատությունը և ազդեցությունը Թեկնածուի մասնագիտական գործունեության վրա:

---

[8] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2023 թվականի մարտի 22-ի թիվ ԵԴ/0137/01/22 որոշումը:

ԲԱԺԻՆ 4. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՓՈՒԼ

1. Հանձնաժողովը, իրավասու ստորաբաժանման կողմից ներկայացված բարեվարքության եզրակացության նախագիծը ստանալուց հետո, գնահատելով Թեկնածուի բարեվարքությունը հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության, քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու, նրա նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացված լինելու, հայցվոր կամ պատասխանող հանդիսանալու, անձի՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտում կատարված լինելու, անձի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների, անձի և «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրա ընտանիքի անդամների գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտներին համապատասխանության, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրության, անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների, ինչպես նաև քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքով կազմում և իրավասու մարմին է ներկայացնում անձի բարեվարքության վերաբերյալ դրական կամ բացասական բնույթի խորհրդատվական եզրակացություն:

2. Անձի բարեվարքությունը գնահատվում 3-րդ բաժնում ներկայացված կարգավորումների համաձայն:

3. Գնահատումն իրականացվում է հաշվի առնելով նաև հետևյալ սկզբունքները՝

- *Բարեվարքության գնահատականի վրա ազդեցություն ունեցող գործոնների չեզոքացման բեռը կրում է Թեկնածուն.*

Այս առումով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դեռևս իր՝ 2006 թվականի մարտի 16-ի Zdanoka v. Latvia [ՄՊ] թիվ 58278/00 վճռով[9] նշել է, որ Դատարանի կարծիքով, բարեվարքության պակասի վերաբերյալ միայն կասկածները կամ առերևույթ դրսևորումները բավարար են անձին թեկնածուների ցուցակից հանելու համար: (…) Սույն որոշումից բխում է, որ թեկնածուները (հավակնորդները) չեն օգտվում անմեղության կանխավարկածից, լռություն պահպանելու իրավունքից, թեկնածուների նկատմամբ կարող են ձևակերպվել բացասական ենթադրություններ և յուրաքանչյուր բացասական ենթադրության արժանահավատությունը գնահատելու համար կարող է կիրառվել օբյեկտիվ թեստը, որը ենթադրում է հարցի դիտարկում արտաքին/անկողմնակալ դիտորդի տեսանկյունից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տվյալ մոտեցումը վերահաստատվել է նաև Xhoxhaj v. Albania վճռի շրջանակներում հայտնած դիրքորոշմամբ:

- *Գույքային դրության սպուգումը չունի վաղեմության ժամկետներ.*

Գույքային դրության արդյունավետ ստուգման համար անհրաժեշտ է վերլուծել նաև անձի վերաբերելի նախկին տվյալները: Այս առումով ևս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2021 թվականի փետրվարի 9-ի Xhoxhaj v. Albania վճռով[10] նշել է հետևյալը. «Հաշվի առնելով, որ անձնական կամ ընտանեկան ակտիվները սովորաբար ձևավորվում են ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում, ակտիվների գնահատման համար ժամանակային խիստ սահմանափակումներ նախատեսելը մեծապես կսահմանափակի և կխանգարի ձեռք բերված ընդհանուր ակտիվների օրինականությունը գնահատելու իշխանությունների կարողությանը:»:

4. Բացասական եզրակացություններ տրամադրելու դեպքում Հանձնաժողովը եզրափակիչ մասում հստակ նշում է կատարում գնահատման հիմք հանդիսացած բաղադրիչի վերաբերյալ՝ հիմնավորելով տվյալ գնահատականը: Ընդ որում, եզրափակիչ մասի հիմնավորումը պետք է լինի առավել ընդհանրական բնույթի՝ հղում կատարելով համապատասխան բաժնի մանրամասներին և չպետք է պարունակի անձնական տվյալ:

---

[9] Zdanoka v. Latvia [Grand Chamber], no. 58278/00, of 16 March 2006, http://hudoc.echr.coe.int/eng?i=001-72794
[10] ECtHR, 9 February 2021, 15227/19, Xhoxhaj v Albania, §§ 349, 351, http://hudoc.echr.coe.int/fre?i=001-208053

5. Հանձնաժողովի անդամները Եզրակացության նախագծով ներկայացված նախնական գնահատմանը քվեարկում են կողմ կամ դեմ՝ դեմ լինելու դեպքում առաջարկելով Եզրակացության կամ կոնկրետ փաստի վերաբերյալ իրենց հիմնավորումը: Այն դեպքում, երբ Հանձնաժողովի անդամը դեմ է քվեարկում Եզրակացությանը, եզրափակիչ հատվածում հակիրճ ներկայացվում է դեմ քվեարկելու հիմնավորումը՝ մանրամասն տեղեկությունները, ըստ անհրաժեշտության, նշելով «Հավելյալ տեղեկություններ» բաժնում:

6. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի անդամների ձայները բաշխվում են հավասար, բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի ներկայացվում, սակայն Եզրակացությամբ նշվում են Հանձնաժողովի անդամների դիրքորոշումները և հիմնավորումները:

7. Եթե Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում բացահայտվում են առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա այդ տեղեկությունները չեն ներառվում Եզրակացության հիմնական մասում և կցվում են Եզրակացությանը՝ որպես հավելված: Միաժամանակ, նշված տեղեկությունները հանցագործության մասին հաղորդման շրջանակներում ներկայացվում են Գլխավոր դատախազություն:

8. Եթե Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում բացահայտվում են հայտարարագրման պահանջների, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ստանալու արգելքի, վարքագծի կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ, այլ մարմնի իրավասության դեպքում համապատասխան գրություն է ներկայացվում տվյալ մարմնին, իսկ Հանձնաժողովի իրավասության շրջանակներում գտնվող հարցերի դեպքում՝ ուսումնասիրությունն իրականացնող վարչությունը համապատասխան զեկուցագիր է ներկայացնում Հանձնաժողովի նախագահին՝ իրավասու ստորաբաժանմանը գործը մակագրելու և համապատասխան ընթացք տալու նպատակով:

9. Թեկնածուի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը հրապարակման ենթակա չէ և չի տրամադրվում այլ անձանց՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների եզրափակիչ մասի: Թեկնածուի բարեվարքության վերաբերյալ

խորհրդատվական եզրակացության եզրափակիչ մասը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված դեպքերում՝ համապատասխան մարմինների կողմից:

10. Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքում տրամադրված խորհրդատվական եզրակացությունները ենթակա չեն հրապարակման:

11. Հանձնաժողովը Թեկնածուի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը միաժամանակ ներկայացնում է Թեկնածուին և նրան նշանակելու կամ ընտրելու իրավասություն ունեցող մարմին: Թեկնածուն կարող է նշանակող կամ ընտրող մարմնին և Հանձնաժողովին ներկայացնել նաև բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության վերաբերյալ իր առարկությունները:

(9-րդ, 10-րդ, 11-րդ կետերը լրաց. 21.04.2026 N 02-L)